

ՌՈՒՄ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ

ԱԶԳԵՐՈՎ

150

ГЛАЗАМИ

РУССКИХ ХУДОЖНИКОВ

Общество „Книга“

Библиотека книголюба



ГЛАЗАМИ РУССКИХ ХУДОЖНИКОВ

Издательство „Советакан грох“

Ереван 1978

===== «Գիրք» ընկերություն =====




Գրքաների գրադարան

ՌՈՒՄ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱԶԳԵՐՈՎ

A / 61335

===== «Առվեպական գրող» =====
իրադարակչություն երևան 1978



Առաջաբանի հեղինակներ և կապողներ՝

Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ

Մ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Խմբագրական կոլեգիա՝

ԲԱԼԱՅԱՆ Վ. Ռ.

ԹԻՐԱԲՅԱՆ Ա. Մ.

ՀԱԿՈԲՅԱՆ Գ. Գ.

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Լ. Վ.

ՍԱՄՎԵԼՅԱՆ Խ. Ե.

Խմբագիր՝ Ս. Հ. ՆԻԿՈՅԱՆ

Авторы предисловия и
составители:

В. А. ПАРСАМЯН

М. С. САРГСЯН

Редакционная коллегия:

АКОПЯН Г. Г.

БАЛАЯН В. Р.

МИРИДЖАНИЯН Л. В.

САМВЕЛЯН Х. Е.

ТИРАБЯН А. М.

Редактор՝

М. В. СААКЯՆ

ԱՌԱՋԱՐԱՆ

Հայ-ռուսական բարեկամության արձանները գնում են դարերի խորքը: Վաղ ժամանակներից սկսած՝ հայերը և ռուսները սնտեսական, մշակութային ու ռազմական կապեր են ունեցել, որոնք մեծապես նպաստել են երկու ժողովուրդների մերձեցմանն ու փոխմթերնմանը, հայ-ռուսական մեծ բարեկամության ստեղծմանը:

17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին հայ-ռուսական հարաբերությունները թևակոխում են իրենց զարգացման նոր փուլը: Հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, մեծ հայրենասեր Խաչյեյ Օրու ջանքերով վերջնականապես ձևավորվում է հայերի կողմնորոշումը դեպի Ռուսիան:

1699 թվականի Անգեղակոթի (այժմյան Սիսիանի շրջանում) դադտնի ժողովը և 1701 թվականին Իսթայել Օրու և Պետրոս 1-ի բանակցությունները Մոսկվայում որոշիչ նշանակություն ունեցան հայ-ռուսական հարաբերությունների հետագա զարգացման համար. հայ ժողովրդի բախտը առհավիտ կապվեց Ռուսաստանի հետ:

Հայերի ռուսական կողմնորոշումը նոր լիցք տվեց նրանց ազատագրական պայքարին: Հայ ժողովրդի ազատագրական շարժումը թուրքական ու պարսկական բռնակալության դեմ նոր թափ ու լայն ծավալ ստացավ: 18-րդ դարը դարձավ մաքառման դար: Ազատագրական պայքարի ասպարեզ ելան մեծ ռազմիրա Խաչյեյ Օրու գործի ու գաղափարի շարունակողները՝ Եսայի Հասան-Ջալալյանը, Մինաս Տիգրանյանցը, Դավիթ-Բեկը, Մխիթար սպարապետը, Հովսեփ Էմինը, Հովհաննես Լազարյանը, Հովսեփ Արղությանը, Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը և ուրիշներ: Մեկը մյուսի հոտից երևան եկան Հայաստանի ազատության ու անկախության վերաբերյալ մի շարք ծրագրեր, որոնց մեջ կարմիր թելի պես անցնում էր հայ-ռուսական, ինչպես և հայ-վրացական բարեկամության ու ռազմաքաղաքական դաշինքի գաղափարը:

18-րդ դարում բոլոր անհրաժեշտ նախադրյալները կային Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի ազատագրութեան և Ռուսաստանին միանալու համար: Բայց, Օսմանյան Թուրքիայի ագրեսիայի պատճառով, այդ տեղի չունեցավ:

1801 թվականին Վրաստանը միացավ Ռուսաստանին: 1804—1806 թվականներին Ադրբեջանը նույնպես միացավ Ռուսաստանին: Դարասկզբին Հայաստանի հյուսիսարևելյան մի շարք շրջաններ ևս միացան Ռուսաստանին:

1826—1828 թթ. տեղի ունեցավ ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: Այս պատերազմը պետք է վճռեր Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելու հարցը:

Հայ ժողովուրդը Ռուսաստանի հետ էր կապում իր ազատագրությունը, ուստի և ամեն կերպ օգնում ու օժանդակում էր ռուսական զորքերի հաղթանակին: Պատերազմի տարիներին հազարավոր հայ կամավորներ ռուս զորքերին միացած՝ մարտնչում էին ընդհանուր թշնամու դեմ, ազատագրական կռիվներ մղում: Պատերազմի շրջանի իր կոշերից մեկում ժամանակի նշանավոր զործիչ Ներսես Աշտարակեցին գրում է. «Հասավ ժամը, երբ աչքով պիտի տեսնենք Աբաբադյան աշխարհի և հայոց ազգի ազատությունը... Ուրի կանգնեցե՛ք, հայոց փառք, քրավեցե՛ք պարսից լուծը, ուրախացե՛ք ալեգարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցե՛ք հայրենի հողերը և ապա ապրեցե՛ք ազատ»:

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հայ ժողովրդի զավակները, ռուսական բաջարի զորքերի հետ, մասնակցեցին Զեվանբուլաղի և Օշականի ճակատամարտերին, Երևանի, Նախիջևանի, Արասաբադի և Սարդարապատի գրավմանը, ամենուրեք աչքի ընկնելով իրենց սխրագործություններով:

1826—1828 թթ. պատերազմն ավարտվեց ռուսական զորքերի փալլուն հաղթանակով: 1828 թ. փետրվարի 10-ին կնքվեց Թուրք-մենչայի հաշտության պայմանագիրը, որի համաձայն Արևելյան Հայաստանը մեկընդմիջտ ազատագրվեց պարսկական բռնակալության դարավոր լծից ու միացավ Ռուսաստանին:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին բախտորոշ նշանակություն ունեցավ ոչ միայն արևելահայերի, այլև ամբողջ հայ ժողովրդի համար: Դա կարևոր շրջադարձ էր հայ ժողովրդի

կլանքում, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային խոշոր առաջընթաց քայլ:

Ռուսաստանի կազմի մեջ մտնելով, հայ ժողովուրդը փրկվեց ֆիրդիկական բնաջնջման ու ձուլման վտանգից: Ռուսաստանի օգնությամբ ավելի քան 140 հազար հայեր ներգաղթեցին Արևելյան Հայաստան, դատարկված ու ամայացած գյուղերն ու քաղաքները վերստին լցվեցին հայերով, Հայաստանը, փաստորեն, վերածնվեց:

Ռուսաստանին միանալով, Արևելյան Հայաստանը կանգնեց զարգացման ավելի բարձր ուղու վրա: Հայ ժողովուրդն իր բախտը առհավետ կապեց ռուս ժողովրդի հետ և նրա օգնությամբ, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ ձեռք բերեց իր ազգային ու սոցիալական ազատագրությունը:

Հայ-ռուսական հարաբերությունների, 1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների մի շարք կարևոր դրվագներ իրենց արտահայտությունն են գտել ռուս նկարիչների գործերում:

Ռուս արվեստագետների հետաքրքրությունը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ երևան է եկել վաղ ժամանակներից: Դեռևս 18-րդ դարում Հայաստան են գալիս մի քանի ռուս նկարիչներ, այդ թվում Մ. Մ. Իվանովը, Ս. Գ. Սերգեևը և ուրիշներ, որոնք, Հայաստանի բնության գեղեցկությամբ և ճարտարապետական կոթողներով հրապուրված, նկարում են բազմաթիվ բնանկարներ և ճարտարապետական հուշարձանների պատկերներ:

Նշանավոր ռուս նկարիչ Միխայիլ Մառվեկիչ Իվանովը (1748—1823) Հայաստան է գալիս 1783 թ. և, շրջադայելով երկրում, նկարում մի շարք բնանկարներ և ճարտարապետական հուշարձանների պատկերներ: Հայտնի է նրա «Մեծ Հայաստանում» ջրանկարը, որը պատկերում է ժայռեր, ջրվեժ, լեռնային արագահոս մի գետ և երկու մարդ՝ հիացմունքով այդ հոյակապ տեսարանը դիտելիս: Նա լինում է նաև միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիում և նկարում «Մեծ Հայաստանի եկեղեցիների տեսարանը Արփաշայ գետի մոտ, գերեզմաններով» ջրանկարը: Երևանում հղած ժամանակ նա նկարում է մի շարք էություններ, այդ թվում «Մի տեսարան Երևանից», «Երևանի շրջակայքում», որոնք նյութ են ծառայում «Երևան քաղաքի տեսարանը» մեծածավալ ու գեղեցիկ ստեղծագործության համար (1783, ջրանկար): Այդ նկարը այժմ

դտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում: Մ. Մ. Իվանովը նկարել է նաև էջմիածնի տեսարանը, Հոփսիմե, Գայանե և Շողակաթ եկեղեցիները Արարատ լեռան տեսարանով: Պահպանվել է նկարչի ճանապարհորդական ալբոմը («Կովկասյան ալբոմ»), որը պարունակում է 1782—1783 թթ. կատարած ջրանկար և մատիտանկար աշխատանքները: Հայաստանում ստեղծած նրա ջրանկարներն ուշագրավ են բնության տվյալ վայրի և ճարտարապետական հուշարձանների բանաստեղծական վերարտադրությամբ ու կոլորիտով:

Առանձնապես նշանակալից է «էջմիածնի տեսարանը» մեծակտավ յուղանկարը, որը նկարիչը ստեղծել է հետագայում՝ 1790-ական թվականներին, Պետերբուրգում, այն նյութերի հիման վրա, որ բերել էր իր հետ Հայաստանից: Այդ պատկերը, ինչպես և նրա ջրանկարչական աշխատանքները, ռուսական արվեստագիտական դրականության մեջ բարձր են դնահաստվել:

Մոսկովայի Տրետյակովյան պատկերասրահում գտնվող «էջմիածին». երեք եկեղեցիների տեսարանը Հայաստանում» ջրանկարի (1782) մասին ռուս անվանի արվեստագետը գրում է. «Նկարիչը ցանկանում է հանգամանորեն պատկերել Հայաստանի նշանավոր հնագույն վայրը իր բազմաթիվ տաճարային շենքերով: Բայց դրա հետ մեկտեղ Իվանովը այդ բարդ պատկերը դիտողին ներկայացնում է պարզ և հստակ, որպես հեշտ ընկալվող և ամբողջական թվացող տեսարան: Իվանովը խնամքով վերարտադրում է հայկական եկեղեցական ճարտարապետության ձևերը, բերդի պարիսպը աշտարակով: Նա կարճիս ուսումնասիրում է ճարտարապետությունը, ձգտում է հաղորդել ծավալայնությունը, նյութականությունը, ճարտարապետական դանդաղների ծանրությունը: Ցանկանալով «բմբռնել» բնապատկերը, հստակորեն պատկերել ամբողջ տեսարանը իր օբյեկտներով, նկարիչը հանգում է պատկերման որոշակի պլանավորվածության: Իվանովը այստեղ օգտագործում է կոմպոզիցիայի կլասիցիստական սկզբունքը, երբ հեռավոր առարկաները դասավորվում են մոտ առարկաների միջև, իսկ տարածությունը կուլիսներով բաժանվում է պլանների: Նա այդպես է դասավորել երկրորդ պլանի վրա կողքի կուլիսների ձևով եկեղեցին քարե պարսպով մի կողմից և մյուս եկեղեցին ցանկապատի հետևի պուրակում՝ մյուս կողմից: Տարածականորեն

ձգվելով դեպի պատկերի խորքը, կոմպոզիցիայի երկու կողային պատերը դիտողի հայացքը սեեռում են այնտեղ՝ պատերի կենտրոնում, նկարված վանքի վրա»¹:

Հետաքրքրական է նկատել, որ կարևոր նշանակություն տալով մշակութային և հոգևոր այդ խոշոր կենտրոնի ճարտարապետական հնագույն հուշարձաններին և շրջակայքի բնության գեղեցկությանը, նկարիչ—ակադեմիկոս Ա. Գ. Ուխտումսկին 1805 թ. Պետերբուրգում պղնձի վրա փորագրում է Մ. Մ. Իվանովի «Էջմիածին» ջրանկարը, որի մի օրինակը այժմ գտնվում է Լենինգրադի Ռուսական թանգարանում: Նշանավոր փորագրող-նկարիչը 1808 թ. կրկնում է նույն աշխատանքը տպագրության համար, ավելացնելով Նոյան տապանի նկարը Արարատի գագաթին:

Նկարիչ Գավրիլ Սերգեևիչ Սերգեևը (1770—1816) Հայաստանում եղել է 1790-ական թվականների կեսերին, հավանաբար 1796 թ., ուր նկարել է բաղմաթիվ բնանկարներ, որոնց բնագրերը, դժբախտաբար, մեղ չեն հասել: Նկարչի ստեղծագործությունների մասին զաղափար ենք կաղմում նրա նկարներից կատարված փորագրությունների (գրավյուրների) հիման վրա: Հինգ փորագրություն հրապարակվել է 1813 թ. Պետերբուրգում: Ուշագրավ է «Էջմիածին հայկական վանքը Արարատ լեռան և շրջակայքի տեսարանով» նկարը (փորագրող Ա. Կազաշինսկի): Գ. Ս. Սերգեևի «Երեւան քաղաքի տեսարանը» նկարը, որը մեղ հայտնի է Ա. Պետրովի փորագրությամբ, պատկերում է քաղաքի տեսարանը Հրադան գետի կողմից, ուր պարզորոշ երևում են հին կամուրջը, ուղտեր կամուրջով անցնելիս, արագահոս գետի վրա խոնարհված ծառեր, ձկնորսներ գետափին և բարձունքի վրա ծվարած միջնադարյան բերդի պարիսպները:

Ռուս նկարչին գրավել է արեւելյան այդ քաղաքի ու նրա շրջակայքի ինքնատիպ բնության հույակապ տեսարանը: Նա սիրով ու մանրակրկիտ է պատկերել այն ամենը, ինչ տեսել է իր աչքերի առաջ: Նրա ստեղծագործությունը գեղարվեստական արժեքից բացի ունի նաև ճանաչողական նշանակություն:

Մ. Մ. Իվանովի և Գ. Ս. Սերգեևի գունանկաչական տեսարա-

¹ А. Федоров-Давыдов, М. М. Иванов. См. Русское искусство. Очерки о жизни и творчестве художников XVIII в. М., 1952, стр. 234—235.

նաչին պատկերները, ինչպես և գրաֆիկ նկարիչներ Ա. Ուխտում-սկու, Ա. Կազաչինսկու, Ա. Պետրովի և մյուսների վերոհիշյալ փորագրությունները իր ժամանակին հետաքրքրություն առաջացրին ուսն հասարակության, մասնավորապես նկարիչների շրջանում Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ: Դրանք միաժամանակ նպաստեցին բնության նոր ընկալմանը, բնանկարչության կազմավորմանն ու զարգացմանը 18-րդ դարի ուսանական կերպարվեստի մեջ:

* *

*

Արեհյան, Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո ավելի է ուժեղանում ուսն նկարիչների հետաքրքրությունը Հայաստանի, նրա բնության ու ժողովրդի նկատմամբ: Հայաստան են գալիս բազմաթիվ նկարիչներ, այդ թվում՝ Վ. Մաշկովը (Մոշկով), հետագայում՝ Գ. Գ. Գաղարինը, Ֆ. Ի. Բայկովը, Բելոյը, Ժուկովսկին, Բերեժնոյը և ուրիշներ, որոնք նկարում են Հայաստանի բնության տեսարաններ, մարդկանց դիմանկարներ և պատերազմական անցքեր:

Դրանցից առանձնապես նշանակալից են Վ. Ի. Մաշկովի ստեղծագործությունները:

Վլադիմիր Իվանովիչ Մաշկովը (1792—1839) նկարչական կրթությունը ստացել է Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում 1801—1812 թթ.: Նա սովորել է պատմական նկարչության դասարանում՝ պրոֆ. Մ. Մ. Իվանովի մոտ: Գեղարվեստի ակադեմիան ավարտելուց մի բանի տարի հետո՝ 1815 թվականին, «Ճակատամարտ Լեյպցիգի մոտ» նկարի համար 23-ամյա նկարչին շնորհվում է ակադեմիկոսի կոչում:

1816 թվականին ակադեմիկոս Վ. Ի. Մաշկովը Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի կողմից զործուղվում է Կովկաս և աշխատում գեներալ Ա. Երմոլովի բանակում որպես շտաբային նկարիչ: 1817 թ. ապրիլին գեներալ Երմոլովի գլխավորած ուսանական դեսպանության հետ նա առաջին անգամ լինում է Հայաստանում, Լոռու-Փամբակի, Գյումրու, Թալինի, Էջմիածնի վրայով մայիսի սկզբներին հասնում է Երևան, իսկ մայիսի 19-ին՝ Թավրիզ:

Երկրորդ անգամ Վ. Ի. Մաշկովը Հայաստան է գալիս տասը տարի հետո՝ 1827 թվականին, Դենեբալ Պասկևիչի բանակի հետ, որպես զինվորական նկարիչ։ Նա մասնակցում է 1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներին և բազմաթիվ նկարներ ստեղծում ռուսական զորքերի հաղթական ճակատամարտերի ու պատմական այլ կարևոր իրադարձությունների թեմաներով։ Այդ տարիները չափազանց բեղմնավոր եղան տաղանդավոր նկարչի համար։ Նա նկարում է 15 պատկեր, որոնցից կազմում և 1836 թվականին Փարիզում հրատարակում է արժեքավոր և ունիկալ ալբոմ։

Վ. Ի. Մաշկովը ռուսական կերպարվեստի պատմության մեջ հայտնի է որպես տաղանդավոր մարտանկարիչ։ Նրա ջրանկար ստեղծագործությունները մեզ հայտնի են դրանց վիմագրություններով։ Վ. Ի. Մաշկովը ժամանակագրական կարգով, մանրամասն ու ճշգրիտ, պատկերում է ռուսական զորքերի մարտական գործողությունները, որոնց նա ոչ միայն ականատես, այլև անմիջական մասնակից է եղել։

Այդ տեսակետից պատմական ու գեղարվեստական կարևոր հետաքրքրություն են ներկայացնում նրա մարտանկարչական ստեղծագործությունները, մասնավորապես. «Հաղթանակ պարսիկներին դեմ Զեվանբուլադի ճակատամարտերում, 1827 թ. հուլիսի 5-ին», «Աբասաբադի բերդի հանձնվելը 1827 թ. հուլիսի 7-ին», «Սարդարապատի բերդի գրավումը 1827 թ. սեպտեմբերի 20-ին», «Երևանի բերդի գրավումը 1827 թ. հոկտեմբերի 1-ին», «Կարս քաղաքի գրավումը 1828 թ. հունիսի 23-ին», «Էրզրումի գրավումը 1829 թ. հունիսի 27-ին», «Ախալցխայի գրավումը 1828 թ. օգոստոսի 15-ին» և ուրիշները։

«Երևանի բերդի գրավումը» (1827 թ. հոկտեմբերի 1) նկարը պատկերում է հին Երևանի բերդի բնահանուր տեսարանը՝ դիտված հեռավոր ու բարձր կետից։ Կրկնակի պարսպապատ բերդը շրջապատել ու գրոհում են ռուսական զորքերը, որոնք նկարված են պատկերի առաջին պլանում։ Ռուսական հրանոթներից արձակված արկերի ծուխը ամպերի նման պատել է դաշտը։ Միսի քուլաներ են երևում նաև բերդի պարիսպների ետևից՝ հակառակորդի կողմից, բայց այնքան փոքր ծավալով ու տեղ-տեղ։ Նկարիչը պատկերել է կովի թեժ պահը։ Երևում են բերդապարիսպների փլվածքները։ Ակ-

նառու է ուսական ղեկքի հղորությունը: Դա նկատվում է ուսական ղորքերի առաջադաս, ղորամասերի շարասյունների սրբնթաց ու բերդը ռմբակոծող հրանոթների տեղադար համադարկերի միասնություն մեջ: Վ. Ի. Մաշկովը այստեղ ստեղծել է ուսական ղեկքի հաղթանակը մեծարող մասնայական տեսարան:

«Կարսի գրավումը» նկարի կոմպոզիցիայի կենտրոնում պատկերված է հայկական հինավուրց քաղաքը՝ հարթ կառույցներ ունեցող իր բազմաթիվ տներով, որոնց մեջ հասակորեն կրեւում են հայոց եկեղեցիներն ու թուրքական մինարեթները, քաղաքի պարիսպները և կամուրջը:

Ռուսական հեծյալ ու հեաիոտն ղորամասերը Կարսի բերդի վրա գրոհել են գետի կողմից, 1828 թ. հունիսի 21—22-ին: Զորքերի մի մասն արդեն իջել է գեպի գետը և լաստանավերով անցնում է մյուս ափը, իսկ առաջադաս ղորամասերը կանոնավոր շարքերով գնում են գետափնյա հրապարակով ու մոտենում քաղաքի պարիսպներին: Պարիսպների ետեից ու քաղաքի տարբեր կետերից նկատվում են հակառակորդի հրանոթների կրակոցների հետքեր՝ ծխի բուլաներ, որոնք ցույց են տալիս թշնամու ուժեղ դիմադրությունը: Սակայն ուսական ղորամասերը շարժվում են գեպի քաղաքի մատուցները, միաժամանակ կրակելով թշնամու ղորքերի վրա: Այս նկարում, ինչպես և նախորդ նկարում, ուս մարտիկները պատկերված են առաջին պլանում, որը շատ հատկանշական է նկարչի մաբտանկարչական ստեղծագործությունների համար:

«Ախալցխայի գրավումը 1828 թ. օգոստոսի 15-ին» նկարը պատկերում է ուսական քաղաքի ղինվորների հաղթական մարտերը թուրքական ղորամասի դեմ: Օգոստոսի 10-ին ուսական ղորքերը պաշարում են Ախալցխայի բերդը: Գեներալ Պասկևիչն առաջարկում է առանց կռվի հանձնվել, բայց մերժում ստանալով, անցնում է գրոհի: Հակառակորդը կատաղի դիմադրություն է ցույց տալիս: Մուլը վրա է հասնում, բայց մարտերը շին դադարում: Կատաղի կռիվները, կրակի բոցերի մեջ, շարունակվում են գիշերը: «Գիշերային մարտը շատ կատաղի էր,— գրում է «Զինվորական հանրագիտարանը»,— հրանոթային կրակներից քաղաքում առաջանում են սարսափելի հրդեհներ, այնպես որ նրա մեծ մասը գիշերը կրակի

մեջ է հղել»¹։ Ահա հենց այդ տեսարանն է վառ գույներով պատկերել իր ջրանկարում նկարիչ-աղանատեսը, որի գունավոր վիճազորությունը այժմ ցուցադրվում է Հայաստանի պետական պատմական թանգարանում։ 13-ժամյա արյունահեղ մարտերից հետո թուրքերը դիմում են փախուստի, կորցնելով 5000 մարդ։ Ռուսների կորուստը կազմում էր մոտ 700 մարդ։

Ախալցխայի գրավման ժամանակ հայերը և վրացիները մեծ օգնություն են ցույց տալիս ռուսական զորքերին։ Հայ ռազմիկներից աչքի են ընկնում Բեհբուջյանը (Բեբուտով), Ղորղանյանը, Մելիք-Բեգլարյանը, Բեջանյանը և շատ ուրիշներ։ Պասկևիչը գեներալ Վ. Բեհբուջյանին նշանակում է Ախալցխայի կայազորի պետ և շրջանի կառավարիչ։

«Էրզրումի գրավումը» նկարը պատկերում է ռուսական զինքի հաղթանակի մի այլ տեսարան։ Թուրքական զորամասի հրամանատարությունը 1829 թ. հունիսի 27-ին եկել է գեներալ Պասկևիչին ընդառաջ և նրան է հանձնում քաղաքի դարպասի բանալիները։ Էրզրումը և նրա շրջակա լեռները պատկերված են կոմպոզիցիայի կենտրոնում։

Տեսարանային այս նկարում Վ. Մաշկովը մի փոքրիկ անկյուն է հատկացրել այդ զորամատիկական անցքին, բայց, չնայած դրան, նկարն ընկալվում է որպես ռուսական բանակի հաղթանակի ապոթեոզ։

Ռուսական արվեստագիտության մեջ բարձր են գնահատվել Վ. Ի. Մաշկովի մարտանկարչական ստեղծագործությունները։ «Պատերազմական թեման,— գրել է արվեստաբան Ա. Ա. Սիդորովը,— ունեցել է իր առավել հետաքրքրական և ուշադիր պատկերողը հանձին Վ. Ի. Մաշկովի, որը Երմոլովի ու Պասկևիչի հետ մասնակցել է դեպի Պարսկաստան և Թուրքիա կատարված արշավանքներին»։

Վ. Ի. Մաշկովը ստեղծել է նաև թեմատիկ-սյուժետային պատկերներ, որոնք խորապես բովանդակալից և բազմաֆիգուր կոմպոզիցիաներ են։ Այդպիսիք են, օրինակ, «Դեհկարխանի բանակցությունները», «Թուրքմենշայի պայմանագրի կնքումը», «40,000 հայերի ներգաղթը Պարսկաստանից» և ուրիշներ։

1 Военная энциклопедия. СПб., 1911, т. II, стр. 282.

2 А. А. Сидоров. Рисунок старых русских мастеров, 1956, стр. 357.

«40 հազար հայերի ներգաղթը Պարսկաստանից ռուսական սահմանները» ջրանկարը (1828) պատկերում է պարսկական տիրապետության տակ եղած հայերի ներգաղթը Հայաստան: Նկարը ներկայացնում է Արաքս գետն անցած հայերի հանգիստը Արաքստյան դաշտում՝ Արարատ լեռան ֆոնի վրա, նրանց ուրախությունն ու ցնծությունը աղատագրված հայրենիքում: Այս ջրանկարի հիման վրա նկարիչը հետագայում ստեղծում է գոծնավոր վիճագրություն (1832 թ.), որը բաղմացվում ու վաճառվում է:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Թուրքմենշախի պայմանագրի կնքումը 1828 թ. փետրվարի 10-ին» նկարը: Դա պատկերում է արևելյան ոճով ձևավորված մի մեծ սրահ, որ սեղանի մոտ հաղթական, հպարտ կեցվածքով նստած է գեներալ Պասկևիչը Ա. Ս. Գրիբոյեդովի և ուրիշների հետ: Պասկևիչը բանակցում է Աբբաս Միրզայի հետ և փաստորեն թելադրում Գրիբոյեդովի կողմից հմտորեն մշակված հաշտության պայմանները: Նկարում բանակցություններին մասնակցում են 5 ռուս և 10 պարսիկ: Պարսիկները լուռ են, տխուր ու շփոթված վիճակում: Ալայար խանը ատելությամբ հայացքը սեռեւել է Գրիբոյեդովի վրա: Բաղմագֆուր ալա կոմպոզիցիան արտահայտիչ է:

Առհասարակ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին վերաբերող Վ. Մաշկովի կոմպոզիցիաները շատ բովանդակալից են, իրական և ճշմարտացի: Տաղանդավոր նկարչի այդ գործերը ոչ միայն գեղարվեստական, այլև պատմական մեծ արժեք են ներկայացնում: Կարելի է ասել, որ դրանք յուրատեսակ պատմական վավերագրեր են:

Բացի ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներին վերաբերող սյուժետային պատկերներից, Վ. Ի. Մաշկովը նկարել է նաև Հայաստանի բնության, հիշարժան վայրերի և ընդհանրապես կովկասյան բնության տեսարաններ: Լենինգրադի Ռուսական թանգարանի գծանկարների ֆոնդում պահվում են նրա «Ախթալայի հին վանքի տեսարանը», «Բաղալտի լեռները Հայաստանում» ջրանկարները, որոնք տեսարանային պատկերներ են: Այդպիսիք են նաև «Թիֆլիսի տեսարանը» (1829), «Կովկասի լեռները» և ուրիշներ, որոնց զխառնոր արժանիքը, ինչպես արդեն նկատված է, ճշգրտությունն է:

«Սևաստոպոլի պաշտպանությունը» հուշակավոր համայնա-

պատկերի հեղինակ, նկարիչ-ակադեմիկոս Ֆրանց Ալեքսեյիչ Ռուբոն (1856—1929) ռուսական մարտանկարչության ականավոր ներկայացուցիչներից է։ Մյունխենի ակադեմիան ավարտելուց հետո նա նվիրվում է մարտանկարչությանը և ստեղծում այդ ժանրի բազմաթիվ մեծակտավ պատկերներ, այդ թվում կովկասյան պատերազմների թեմաներով մի շարք նկարներ։ Հանրահայտ են նրա «Գլյոկ-թափա ամրոցի վրա ռուսական զորքերի գրոհը» (1887), «Արդուլյան-Երկայնաբազուկի ջոկատի անցումը լեռներիով» (1829), «Ելիզավետպոլի ճակատամարտը» և ուրիշներ։

Ֆ. Ա. Ռուբոյի լավագույն գործերից է նաև «Ռուսական զորքերի հաղթական մուտքը Երևան» նկարը։ Պատկերը ներկայացնում է Երևանի բերդի ընդհանուր տեսարանը Արարատ լեռան հետ։ Մարտերի ժամանակ քանդված պարսպից բերդ են մտնում ռուսական զորամասերը։ Նրանց դիմաց կանգնած են պարսկական պարտված կայազորի հեծյալ և հետևակ զինվորները, որոնք իրենց հրացաններն ու դրոշները ցած դրած դիտում են ռուսների հաղթական մուտքը։ Ամբողջ պատկերը, ողողված արևի լույսով, հազվեցած է կենսուրախ տրամադրությամբ։ Այս ստեղծագործության մեջ հիմնական գործող անձինք զինվորներն են, որոնք ներկայացնում են այն մասսան, որը հաղթանակ նվաճեց։ Կարևոր նշանակություն տալով զինվորներին, նկարիչը դրանով իսկ ցույց է տալիս, որ ռուսական զենքի հաղթանակը ձեռք է բերվում հենց այդ շարքային զինվորների հերոսական ջանքերով։

Առանձին հետաքրքրություն կեն ներկայացնում այս ալբոմում ղեկավարած Երևանի, Կարսի, Էրզրումի գրավմանը և Թուրքմենչայի ու Ադրիանապոլսի հաշտության պայմանագրերին վերաբերող մեղալիները և հաշ կամավորական ջոկատների դրոշների լուսանկարները։ Դրանք ռուսական զենքի նշանավոր հաղթանակները հավերժացնող և հայկական ջոկատների հռանգուն մասնակցության արժեքավոր պատմական վավերագրեր են։ Սույն ալբոմում ղեկավարած ռուս նկարիչների նկարները որոշակի պատկերացում են տալիս Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների, ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների և ռուսական քաջարի զորքերի հաղթանակների մասին, հաղթանակներ, որոնք հաշ ժողովրդին ազատություն բերին և զարգացման նոր ուղիներ բացեցին նրա համար։


Корни армяно-русской дружбы уходят в глубь веков. С древних времен армяне были связаны с русскими экономическими, культурными и военными узами, что весьма способствовало сближению и взаимообогащению этих двух народов, зарождению великой армяно-русской дружбы.


В конце XVII и начале XVIII веков армяно-русские взаимоотношения вступают в новую фазу своего развития. Благодаря усилиям выдающегося деятеля армянского освободительного движения, большого патриота Исраела Ори окончательно формируется русская ориентация армян.

Решающее значение для развития армяно-русских взаимоотношений имели тайное собрание 1699 года в Ангехако-те (ныне Сисианский район) и переговоры между Исраелом Ори и Петром I в 1701 году в Москве. Армянский народ навсегда связывает свою судьбу с Россией.


Русская ориентация придала новый толчок освободительной борьбе армян. Освободительное движение армянского народа против турецкой и персидской тирании получило новый размах и широкие масштабы. XVIII век стал веком освободительной борьбы. На арену выступили продолжатели дела и идей Исраела Ори: Есаи Гасан-Джалалян, Минас Тигранянц, Давид-Бек, Мхитар Спарпет, Овсеп Эмин, Ованес Лазарян, Овсеп Аргутян, Шахамир Шахамирян, Мовсес Баграмян и другие. Одна за другой появляются ряд программ по освобождению Армении, в которых красной нитью проходит идея армяно-русской, а также армяно-грузинской дружбы и военно-политического союза.


В XVIII веке уже были все необходимые предпосылки для освобождения Армении и всего Закавказья и присоеди-





















































25



26



27



28





нения к России. Однако по причине агрессии Османской Турции этого не произошло.

В 1801 году Грузия присоединилась к России. В 1804—1806 годах к России присоединился и Азербайджан. В начале века к России присоединились также северо-восточные районы Армении.

Вторая русско-персидская война 1826—1828 годов должна была решить вопрос присоединения Восточной Армении к России, однако по неблагоприятному стечению обстоятельств этого не произошло в начале века. Армянский народ связывал свое освобождение с Россией и потому всячески помогал и способствовал победе русских войск. В годы войны тысячи армянских добровольцев вместе с русскими войсками сражались против общего врага. В одном из своих воззваний знаменитый деятель своего времени Нерсес Аштаракеци пишет: «Наступил час, когда мы воочию видим освобождение страны Араратской и армянской нации. Вставайте, храбрые армянские, сбросьте персидское иго, порадайте сегоглавый Масис, обогрите еще раз кровью родную землю и живите затем свободно...»

Во время русско-персидской войны 1826—1828 годов сыны армянского народа вместе с доблестными русскими войсками участвовали во взятии Еревана, Нахиджевана, Абасбата и Сардарапата, и везде они отличились храбростью и героизмом. Война 1826—1828 годов завершилась блестящей победой русских войск. 1 октября 1827 г. был взят Ереван. 10 февраля 1828 года был заключен Туркменчайский мирный договор, согласно которому Восточная Армения раз и навсегда избавилась от многовекового ига персидской тирании и присоединилась к России. Присоединение Восточной Армении к России имело решающее значение не только для восточных армян, но и для всего армянского народа. Оно явилось поворотным пунктом в жизни армянского народа, крупным социально-экономическим, общественно-политическим и культурным шагом вперед.

Войдя в состав России, армянский народ спасся от опас-



ности физического уничтожения и ассимиляции. Благодаря помощи России, более 140 тысяч армян переселились в Восточную Армению, опустевшие и заброшенные города и села вновь заполнились армянами. Армения, фактически, возродилась.

Присоединившись к России, Восточная Армения вступила на более высокую ступень развития. Благодаря Великой Октябрьской социалистической революции, армянский народ, связавший свою судьбу с русским народом, обрел свою национальную и социальную независимость.

Целый ряд важных эпизодов, касающихся армяно-русских отношений, русско-персидской войны 1826—1828 годов и русско-турецкой войны 1828—1829 годов, нашли свое отражение в произведениях русских художников.

Интерес русских художников к Армении и армянскому народу проявляется с ранних времен. Еще в XVIII веке в Армению приезжают несколько русских художников — М. М. Иванов, С. Г. Сергеев и другие. Покоренные красотой природы Армении и уникальными архитектурными памятниками, они создают многочисленные пейзажи и картины древних памятников материальной культуры.

Известный русский художник **Михаил Матвеевич Иванов** (1748—1823) приезжает в Армению в 1782 г. Путешествуя по стране, он пишет виды горной Армении и архитектурных памятников. Примечательна его акварельная работа «В Великой Армении», которая изображает высокие скалы, водопад, горную реку и людей, восхищающихся чудесным пейзажем. Он побывал и в древней столице средневековой Армении — Ани, где написал картину «Вид церквей в Великой Армении».

Во время пребывания в Ереване, художник написал ряд этюдов, в том числе «Вид Еревана», «В окрестностях Еревана», на основе которых он создал одно из лучших своих произведений «Вид города Еревана» (1783, акварель), находящееся ныне в Государственной картинной галерее Ар-

мени. М. М. Иванов запечатлел в полотнах также церкви Эчмиадзин, Рипсима, Гаянэ, Шогакат на фоне горы Арарат. Сохранился путевой альбом художника («Кавказский альбом»), который содержит его акварельные и карандашные работы, сделанные в 1782—1783 гг. с натуры.

Особенно примечательно большое масляное полотно «Эчмиадзин. Вид трех церквей в Армении», которое автор создал впоследствии—в 1790-х годах, в Петербурге, на основе материалов, привезенных из Армении.

Эти картины, как и другие его произведения, высоко оценены в русской искусствоведческой литературе. Об акварели «Эчмиадзин. Вид трех церквей в Армении» (1782), находящейся ныне в Третьяковской галерее в Москве, известный русский искусствовед пишет: «Художник хочет обстоятельно изобразить знаменитое древнее место Армении с его многочисленными храмовыми постройками. Но вместе с тем это сложное изображение Иванов представляет зрителю как простое и ясное, как легко обозримый и кажущийся целостным вид. Иванов старательно передает формы армянской церковной архитектуры, крепостную стену с башней. Он как бы изучает архитектуру, стремится передать объемность, материальность, тяжесть архитектурных масс. Желание «разобраться» в натуре, ясно изобразить весь вид с его объектами, приводит художника к определенной распланированности изображения. Иванов использует при этом классицистический принцип композиции, при котором дальние предметы располагаются в промежутках между ближними и пространство членится кулисами на планы. Так располагает он на втором плане в виде боковых кулис церковь с каменной стеной с одной стороны и другую церковь в роще за оградой—с другой. Перспективно уходя в глубину, обе ограды влекут взгляд картины к расположенному там, в центре картины, монастырю»¹.

¹ А. Федоров-Давыдов, М. М. Иванов. См. Русское искусство, Очерки о жизни и творчестве художников XVIII в. М., 1952, стр. 234—235.

Интересно отметить, что, придавая важное значение древним архитектурным памятникам этого большого культурного и духовного центра Армении, академик А. Г. Ухтомский (1771—1852) в 1805 году в Петербурге выгравировал на меди акварельную работу М. М. Иванова «Эчмнадзин», экземпляр которой ныне находится в Государственном русском музее в Ленинграде. В 1808 году известный гравер повторил эту работу для печати, добавив изображение Ноева ковчега на вершине горы Арарат.

Живописец **Гавриил Сергеевич Сергеев** (1770—1816) был в Армении в середине 1790-х годов, вероятно, в 1796 г. Здесь он написал ряд пейзажей, оригиналы которых, к сожалению, не дошли до нас. Наше представление о произведениях художника основано на гравюрах с его картин. Пять гравюр были опубликованы в 1813 г. в Петербурге. Примечательна гравюра «Вид первопрестольного Армянского монастыря Эчмнадзина близ горы Арарат с окрестностями» (гравер А. Казачинский). Картина Г. С. Сергеева «Вид города Еревана близ горы Арарат при реке Занге» (гравер А. Петров) изображает старый мост Еревана, верблюдов, медленно шествующих по мосту, деревья, склонившиеся к бурной реке, рыболовов на берегу, стены и башни на склоне высокого каменного берега.

Видовые картины живописцев М. М. Иванова и Г. С. Сергеева, а также вышеуказанные графические работы русских гравюров А. Ухтомского, А. Казачинского, А. Петрова и других вызвали в свое время в среде русской общественности, в частности у художников, большой интерес к Армении и армянскому народу. Эти произведения способствовали также новому восприятию природы, возникновению и развитию пейзажной живописи в русском изобразительном искусстве XVIII века.

После присоединения Восточной Армении к России интерес русских художников к Армении, ее природе и народу возрос. В Армению приезжают ряд художников, в их числе В. Машков, Г. Г. Гагарин, Ф. И. Байков, Белой, Жуковский,

Березной и другие. Они запечатлели виды Армении, портреты людей, а также военные события.

Особенно примечательны произведения В. И. Машкова.

Художественное образование **Владимир Иванович Машков** (1792—1839) получил в Петербургской академии художеств в 1801—1812 годах. Он учился в классе исторической живописи у проф. М. М. Иванова. После окончания Академии, в 1815 году за картину «Битва при Лейпциге» 23-летнему художнику присваивается звание академика.

В 1816 году В. И. Машков командирован Петербургской академией на Кавказ и работает штабным художником в армии генерала А. Ермолова. В апреле 1817 года, вместе с русским посольством, возглавляемым генералом Ермоловым, он впервые попадает в Армению. Через Лори-Памбак, Гюмри, Талин, Эчмиадзин он в начале мая приезжает в Ереван, а 19 мая — в Тавриз.

Второй раз В. И. Машков приезжает в Армению через десять лет, в 1827 году с армией генерала И. Ф. Паскевича в качестве военного художника. Он участвует в русско-персидской войне 1826—1828 гг. и русско-турецкой войне 1828—1829 гг. и создает многочисленные акварельные картины на темы сражений и побед русской армии. Эти годы стали необычайно плодотворными для художника. Он написал 15 картин, из которых создал уникальный альбом, напечатанный в 1836 году в Париже.

В. И. Машков известен в русском изобразительном искусстве как талантливый баталист. Его акварельные произведения известны нам по их литографиям. Он в хронологическом порядке, подробно и точно изображает боевые действия русских войск. В. И. Машков был не только свидетелем, но и непосредственным участником этих событий.

С этой точки зрения важный исторический и художественный интерес представляют его произведения, в частности: «Победа над персами при Джеванбулаге 5 июня 1827 г.», «Сдача крепости Абас-Абата 7 июля 1827 г.», «Взятие штур-

мом крепости Сардарapat 20 сентября 1827 г.», «Взятие штурмом крепости Еревана 1 октября 1827 г.», «Переправа через реку Аракс под предводительством генерала Паскевича в 1827 г.», «Взятие штурмом Карса 23 июня 1828 г.», «Сражение у Канли в 1828 г.», «Взятие Эрзрума 27 июня 1829 г.», «Взятие Ахалциха 15 августа 1828 г.» и др.

На картине «Взятие штурмом крепости Еревана 1-го октября, 1827 г.» изображен общий вид крепости Еревана с дальней высокой точки. Русские войска окружили и идут на штурм крепости, защищенной высокими стенами. Дым, поднимающийся от снарядов русских пушек, подобно облаку, окутал равнину. Клубы дыма видны также за крепостными стенами, в стане противника, но в малых размерах и кое-где. Художник запечатлел момент жаркого боя. Видны развалины оборонительных стен. Очевидна мощь русского оружия. Это заметно по стремительному продвижению авангардных частей русских войск и непрерывным залпам пушек, обстреливающих крепость. В. И. Машков создал массовую картину, восхваляющую победу русского оружия.

«Взятие штурмом г. Карса». Композиционный центр картины занимает панорама древнего армянского города с многочисленными домами под плоскими крышами, среди которых отчетливо видны армянские церкви и построенные турками минареты, крепостная стена города и мост. Русские пехотные и кавалерийские части атаковали Карсскую крепость со стороны реки 21—22 июня 1828 года. Часть войск уже спустилась к реке и на плотках переправляется на другой берег, а авангардные части уже идут по прибрежной площадке и подходят к стенам. В различных точках города заметны следы залпов вражеских пушек: клубы дыма, свидетельствующие об ожесточенном сопротивлении противника. Однако русские войска продвигаются к подступам города, обстреливая позиции врага. В этой работе, как и в предыдущей, русские воины изображены на переднем плане, что характерно для большинства батальных картин художника.

«Взятие Ахалциха 15 августа 1828 года». Картина изображает победные бои славных русских воинов против турецких воинских частей. 10 августа русские войска осаждают Ахалцихскую крепость. Паскевич предлагает туркам сдаться без боя, но, получив отказ, переходит к атаке. Противник оказывает яростное сопротивление. Наступает темнота, однако бой не прекращается. Яростные бои в пламени огней продолжаются ночью. «Ночной бой был очень ожесточенным,—пишет «Военная энциклопедия»,—от действия артиллерийского огня в городе возникли страшные пожары, так что большая часть его была к ночи в огне»¹. Вот это событие художник-очевидец яркими красками воспроизвел в акварели, цветная литография которой экспонируется ныне в Государственном историческом музее Армении. После тринадцати часов кровопролитных боев турки обращаются в бегство, оставив 5000 убитых. Потери русских составили 700 человек. Большую помощь во взятии Ахалциха оказали русским войскам армяне и грузины. Среди армянских воинов выделились Бейбутия (Бейбутов), Корганян, Мелик-Бегларян, Бежанян и многие другие. Паскевич назначает генерала В. Бейбутова начальником Ахалцихского гарнизона и правителем района.

«Взятие Эрзрума». Картина изображает победу русского оружия. Командование турецких войск, потерпевших поражение 27 июня 1829 года, передает генералу Паскевичу ключи от города. Эрзрум и окружающие его горы изображены в центре композиции.

Этому драматическому событию в видовой картине В. Машкова отведен лишь маленький уголок. Но, несмотря на это, картина воспринимается как победный апофеоз русской армии.

В русской искусствоведческой литературе высоко оценены батальные произведения В. И. Машкова. «Военная тема,—писал А. А. Сидоров,—имела гораздо более интересно-

¹ Военная энциклопедия, СПб, 1911, т. II, стр. 282.

го и внимательного ее изобразителя в лице В. И. Машкова, совершавшего вместе с Ермоловым и Паскевичем походы в Персию и Турцию»¹

В. И. Машковым созданы также сюжетно-тематические картины, глубокосодержательные и многофигурные композиции. К ним относятся «Переговоры в Дехкархане», «Заключение Туркменчайского договора», «Переселение 40000 армян из Персии» и другие.

Акварель «Переселение 40000 армян из Персии в российские пределы под личное распоряжение полковника Л. Е. Лазарева в 1828 году» отображает переселение армян, находящихся под персидским гнетом, в Армению. Картина изображает отдых перешедших реку Аракс армян на фоне горы Арарат, их радость и ликование на освобожденной родине. На основе этой акварели художник впоследствии создал цветную литографию (1832 г.), которая была размножена.

Особый интерес представляет картина «Заключение Туркменчайского договора 10 февраля 1828 г.». Здесь изображен большой зал, оформленный в восточном стиле, где у стола победоносно, с горделивой осанкой восседает генерал Паскевич вместе с А. С. Грибоедовым и другими.

Паскевич ведет переговоры с Аббасом-Мирзой и фактически диктует ему условия договора, подготовленного Грибоедовым. В переговорах, как показано на картине, участвуют 5 русских и 10 персов. Персы молчаливы, мрачны, в смятении. Алаяр-хан вперил в Грибоедова взгляд, полный ненависти. Эта многофигурная композиция очень выразительна.

Акварельные работы В. Машкова, посвященные русско-персидской и русско-турецкой войнам, очень содержательны, правдивы и реальны. Эти произведения художника представляют не только художественный, но и большой исторический интерес. Их можно назвать своеобразными историческими документами.

¹ А. А. Сидоров. Рисунок старых русских мастеров, 1956, стр. 357.

Помимо сюжетных картин, относящихся к русско-турецкой и русско-персидской войнам, В. И. Машков писал также и пейзажи Армении, достопримечательные места и виды Кавказа. В фондах графики Русского музея в Ленинграде хранятся акварели Машкова: «Вид древнего монастыря Ахталы», «Базальтовые горы в Армении». К ним относятся также «Вид Тифлиса» (1829 г.), «Горы Кавказа» и другие работы, главным достоинством которых является правдивость изображения.

Автор знаменитой панорамы «Оборона Севастополя», художник-академик **Франц Алексеевич Рубо** (1856—1929) является одним из выдающихся представителей русской батальной живописи. После окончания Мюнхенской академии, он посвящает себя батальной живописи и создает много полотен этого жанра, в том числе, ряд картин на тему кавказских войн. Общезвестны его работы «Штурм русскими войсками крепости Гек-Тапа» (1827 г.), «Переход отряда Аргутяна-Долгорукова через горы» (1829 г.), «Битва при Елизаветполе» и другие.

К лучшим работам Ф. А. Рубо относится также полотно «Вступление русских войск в Ереван». На картине—общий вид крепости на фоне горы Арарат. В крепость, разрушенную во время боев, входят русские воинские части. Перед ними стоят пехотинцы и кавалерия побежденного персидского гарнизона, которые, сложив свои ружья и знамена, смотрят на победное вступление русских в крепость. Вся картина, пронизанная солнечным светом, насыщена жизнерадостным настроением. Главные действующие лица этого произведения—воины. Они представляют ту массу, которая одержала победу. Придавая важное значение воинской массе, художник тем самым показывает, что победа русского оружия завоевывалась героизмом этих рядовых солдат.

Особый интерес представляют помещенные в альбоме фотоиллюстрации медалей, посвященных взятию Еревана, Карса, Эрзрума, Туркменчайскому и Адрианопольскому мирным договорам, и знамен армянских добровольческих отря-

дов. Это ценные исторические документы, увековечившие знаменитые победы русского оружия и участие армян в этих освободительных войнах.

Собранные в данном альбоме картины русских художников дают конкретные представления об исторических событиях периода присоединения Восточной Армении к России, о русско-персидской и русско-турецкой войнах и победах храбрых русских войск, принесших армянскому народу освобождение и открывших перед ним новые пути развития.

ՆԱՄՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԻՎԱՆՈՎ Մ. Մ.— Երևանի տեսարանը Հրապոյան գետի կողմից, 1783 թ., ջրանկար:
2. ԻՎԱՆՈՎ Մ. Մ.— Էջմիածին, երեք եկեղեցիների տեսարանը Հայաստանում, 1782, ջրանկար:
3. ՍԵՐԳԵՅԵՎ Գ. Ս — Երևանի տեսարանը գետի կողմից, 1796 թ., փորագրությունը Ա. Պետրովի:
4. Գեներալ Ա. Պ. Երմոլովի և Եփրեմ կաթողիկոսի տեսակցությունը Արարատ լեռան մոտ, վիմագրություն Շուլցի:
5. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Ռուսական պորբի անցումը Արաքս գետով՝ գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ, 1827 թ. հուլիս, հեղինակային վիմագրություն (ավտոլիտոգրաֆիա):
6. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Հաղթանակ պարսիկների դեմ Ջեվանբուլաղի ճակատամարտում, 1827 թ. հուլիսի 5, հեղինակային վիմագրություն:
7. Պորուչիկ Լևկովիչը Ջեվանբուլաղի ճակատամարտում պարսիկներից զրափած դրոշակներով:
8. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Աբասարաղի բերդի հանձնվելը 1827 թ. հուլիսի 7-ին, վիմագրություն Կ. Բեզգրովի:
9. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Սարդարապատի բերդի գրավումը 1827 թ. սեպտեմբերի 20-ին, հեղինակային վիմագրություն:
10. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Երևանի բերդի գրավումը 1827 թ. հոկտեմբերի 1-ին, վիմագրություն Բեզգրով կրտսերի:
11. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Պասկևիչի բանակցությունը Աբբաս Միրզայի հետ Դեհկարխանում՝ 1827 թ. նոյեմբերին:
12. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Թուրքմենչայի պայմանագրի կնքումը 1828 թ. փետրվարի 10-ին:
13. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— 40 հազար հայերի ներգաղթը Պարսկաստանից ռուսական սահմանները գեղապետ Լ. Ե. Լազարյանի անձնական տնօրինությամբ 1828 թ., հեղինակային վիմագրություն (1832):
14. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Կարսի գրավումը 1828 թ. հունիսի 23-ին:
15. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Ալիպաշայի գրավումը 1828 թ. օգոստոսի 15-ին:
16. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Ռուսական զորքերի անցումը Սողանլուղի լեռներով, 1829 թ. հունիսին:
17. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Երվրումի գրավումը, 1829 թ. հունիսի 27-ին:
18. ՄԱՇԿՈՎ Վ. Ի.— Կանդիի ճակատամարտը:

19. ՌՈՒԲՈՖ Ա.— Ռուսական պորքերի մուտքը Երևան 1827 թ. հոկտեմբերի 1-ին:
20. Թուրքական պորքերի հրամանատար Հակկի վաշայի գերեվարումը ռուսական պորքերի կողմից:
21. Բայբուրտի ճակատամարտը, 1829 թ. հուլիսին:
22. Մի պատեր Բայբուրտի ճակատամարտից:
23. Հայ կամավորական ջոկատի դրոշակը, 1827 թ.:
24. Հայ կամավորական ջոկատի դրոշակը, 1827 թ.:
25. Մեղալ՝ նվիրված Երևանի գրավմանը, 1827 թ., գործ Ֆ. Պ. Տոլստոյի:
26. Մեղալ՝ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հաղթանակի առթիվ, գործ Վ. Ալեքսենի:
27. Մեղալ՝ նվիրված Կարսի գրավմանը, 1828 թ., գործ Ֆ. Պ. Տոլստոյի:
28. Մեղալ՝ նվիրված Էրզրումի գրավմանը, 1829 թ. գործ Ֆ. Պ. Տոլստոյի:
29. Մեղաներ՝ նվիրված ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում ռուսական զենքի հաղթանակներին և հաջողության պայմանագրերին:
30. Հուշարձան՝ նվիրված 1827 թ. օգոստոսի 17-ին Օջականի ճակատամարտում զոհված ռուս և հայ մարտիկների հիշատակին, 1834 թ., ճարտարապետ Կոմպանելսկի:

ПЕРЕЧЕНЬ ИЛЛЮСТРАЦИЙ

1. ИВАНОВ М. М.— Вид Еревана со стороны реки Раздан, 1783 г., акварель.
2. ИВАНОВ М. М.— Эчмиадзин. Вид трех церквей в Армении, 1782 г., акварель.
3. СЕРГЕЕВ Г. С.— Вид Еревана со стороны реки, 1796 г., гравюра А. Петрова.
4. Встреча генерала А. П. Ермолова с католикосом Ефремом у горы Арапат, литография Шульца.
5. МАШКОВ В. И.— Переход русских войск под командованием генерала Паскевича через реку Аракс, 1827 г. июль, автолитография.
6. МАШКОВ В. И.— Победа над персами при Джеванбулаге, 1827 г., 5 июля, автолитография.
7. Поручик Левкович с захваченными у персов знаменами в битве при Джеванбулаге.
8. МАШКОВ В. И.— Сдача крепости Абасабад. 1827 г. 7 июля, литография К. Бегрова.
9. МАШКОВ В. И.— Взятие крепости Сардарпат, 1827 г. 20 сентября, автолитография.
10. МАШКОВ В. И.— Взятие штурмом крепости Еревана, 1827 г. 1 октября, литография Бегрова-младшего.
11. МАШКОВ В. И.— Переговоры Паскевича с Аббасом-Мирзой в Дехкархане, в ноябре 1827 г.
12. МАШКОВ В. И.— Заключение Туркменчайского договора 10 февраля 1828 г.
13. МАШКОВ В. И.— Переселение 40000 армян из Персии в российские пределы под личное распоряжение полковника Л. Е. Лазарева, 1828 г., автолитография 1932 г.
14. МАШКОВ В. И.— Взятие штурмом Карса, 1828 г., 23 июня.
15. МАШКОВ В. И.— Взятие штурмом Ахалциха, 1828 г., 15 августа.
16. МАШКОВ В. И.— Переход русских войск через Соганлуйские горы, 1829 г., июнь.
17. МАШКОВ В. И.— Взятие Эрзрума 27 июня 1829 г.
18. МАШКОВ В. И.— Сражение у Канли.
19. РУБО Ф. А.— Вступление русских войск в Ереван 1 октября 1827 г.

20. Пленение русскими войсками командующего турецкими войсками Хакки-паши.
21. Байбуртское сражение, июль 1829 г.
22. Фрагмент из Байбуртского сражения.
23. Знамя армянского добровольческого отряда, 1827 г.
24. Знамя армянского добровольческого отряда, 1827 г.
25. Медаль за взятие Еревана, 1827 г., работа Ф. П. Толстого.
26. Медаль за победу в русско-персидской войне 1826—1828 годов, работа В. Алексеева.
27. Медаль за взятие Карса, 1828 г., работа Ф. П. Толстого.
28. Медаль за взятие Эрзрума, 1829 г., работа Ф. П. Толстого.
29. Медали в честь победы русской армии в русско-персидской и русско-турецкой войнах и медали мирных договоров.
30. Памятник, построенный в 1834 году в память о русских и армянских воинах, погибших 17 августа 1827 года в Ошаканском сражении, арх. Компанейский.



Ռուս նկարիչների աչքերով
(Հայերեն և ռուսերեն լեզուներով)
<ՍՍՀՄ «Գիրք» ընկերություն
«Սովետական գրող» հրատարակչություն

Глазами русских художников
(На армянском и русском языках)
Общество «Книга» Армянской ССР
Издательство «Советакан грох»

Նկարիչ՝ Գ. Ա. Գասպարյան
Գեղ. և տեխ. խմբագիր՝ Աճ. Վ. Գասպարյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Լ. Լ. Սիմոնյան, Բ. Ս. Ավետիսյան

ИБ № 2108.

Հանձնված է շարվածքի 20/VIII 1978 թ.:
Ստորագրված է տպագրության 2/XI 1978 թ.:
Բուդժ № 1, $60 \times 84^{1/16}$, տպագր. 2,0 մամ. = 1,86 պայմ. մամ.,
Հրատ. 1,3 մամ. + 14 ներդիր:
Պատվեր՝ 1741: ՎՖ 01398: Տպաքանակ՝ 5000: Գինը՝ 40 կոպ.:
«Սովետական գրող» Հրատարակչություն, Երևան—9, Տեղյան 91:
ՀՍՍՀ Հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի
գործերի պետական կոմիտեի № 6 տպարան,
Երևան, Բումանյան փողոց, № 23/1:

Художник Г. А. Гаспарян
Худ. и техн. редактор А. В. Гаспарян
Контр. корр. Л. Л. Симонян, Б. С. Аветисян

Сдано в набор 20/VIII 1978 г.. Подписано к печати 2/XI 1978 г.
Бумага № 1, $60 \times 84^{1/16}$, печ. 2,0 л. = 1,86 л. усл.-печ.

Уч. изд. 1,3 л. + 14 вклеек.

Заказ 1741. ВФ 01398 Тираж 5000. Цена 40 коп.

Издательство «Советакан քոօ», Еրևան—9, ул. Теряна, 91.

Типография № 6 Госкомитета по делам издательств,
полиграфии и книжной торговли Арм. ССР,
Еրևան, ул. Туманяна, 23/1.

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

